

ՆԻՓՈԼԱ ԿՈՒՈԼԻ ՀԱՌԻԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

«Ռուս Դպրութեանց Բարեկամներու Ընկերութենէն», Տրաքիոսան ըլլալով մասնակցել Նիքոլա Կոլոլի Տարեւարմանի Հանդէսին որ կատարուեցաւ Մոսկուա՝ Մայիս 6ին, Անհիպի տնօրէնը զրկեց Ֆրանսերէն լեզուով՝ հետեւեալ ուղերձը .

«Ռուս գրականութիւնը խորին ազդեցութիւն ունեցած է ուսական Հայաստանի գրագէտներուն և նոյն իսկ Թուրքիոյ Հայ նորակէպագիրներէն ոմանց վրայ : Անհանձն գիտութեան ոգին, մարդկային լայն եղբայրութեան մը բուռն ծարաւը, բացարձակ արգարութեան բաղձանքը, կենսիկ ուղղակի գիտողութեան և պարզ ու հաւատարիմ արտայայտութեան ձգտումը, արուեստը առանց արուեստականութեան՝ որ կը յայտնուի իբր իրենցարեւր ու կենդանի ծագակալութեամբ մը մարդկային հոգեոյն, այս բոլոր յատկանիշները ռուս մեծ գրագէտներուն, խանդավաւօրէն սիրուած են մասնականակից Հայ գրականութեան մէկ քանի լաւագոյն ներկայացուցիչներէն, և կազմած են էական տարրերէն մին որ, ցեղային խառնուածքի և ազգային գեղեցկագիտական աւանդութեանց հիմնական տարրին ու արեւմտեան Եւրոպայի մեծ գրականութեանց ազդեցութեանը հետ, ձևացուցած են Հայոց նոր գրականութիւնը :

«Իմ հիշման հարկս մատուցանելով ռուս գրականութեան Հայոց ու հիմնադիր Նիքոլա Կոլոլի յիշատակին, ուրախ եմ ուրեմն որ կարող եմ այս առթիւ՝ յայտնել միևնոյն ատեն Հայ դպրութեանց երախտագիտութիւնը հանդէպ ռուս մտածման վարպետներուն».

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՄԻԹԻՆԿԸ

Ապրիլ 25ի իրիկունը, Քաֆէ տիւ Կլոպի սրահին մէջ, Փարիզի Հայերը գումարեցին միթիքնի մը՝ Կլիկիոյ կոտորածներուն դէմ բողոքելու համար : Կը նախագահէր Տիգրան խան Քեւէկեան : Հայոց եւ Եւրոպացուք խառն ըսողութիւնն մը ներկայ էր : Ռոսեցան ըսողութիւնն բանախօսներ, — Շիրվանդադէ, Շահմուրատեան, Մ. Զանդմեան, Անթուան Պրիմօ, «Անահիտ» տնօրէնը, եւն. :

Որոշուեցաւ պատգամաւորութիւն մը ու զարկել օսմանեան դեպքանին եւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին : Որոշուեցաւ նաեւ զրկել երախտագիտութեան հեռագիր մը Միքիլինի անգլիական դեմ-հեռագրատանին՝ իր ցոյց տուած դիւցազնական մարդասիրութեանը համար, եւ հետեւեալ հեռագիրը՝ Սեւանիկի «Միութիւն» եւ Յառաջդիմութիւն» Քամիքէն :

«Միութիւն եւ Յառաջդիմութիւն» Քամիքէն, Սեւանիկ. Փարիզի հայ գաղութը 1. Ձեզ կը ընտրուաւ ցամաքում համար զոր կը թափէ՛ Ստոյմապետութիւնը պաշտպանելու եւ բռնապետական տեմիք կոծմանելու : 2. Ձեզ կը յայտնէ իր ցաւակցութիւնները ազատութեան մարտիտա օպանելու վաս սպանման համար : 3. Կը յայտնէ իր գայրոյթ Կլիկիոյ շարդեւուն հանդէպ եւ ձեզ կը պահանջէ միջամեջ՝ զինուորական մարմնի որ անմիջական ուղարկման համար՝ ուղեւ գի կոտորածները դադրին եւ յանգուտները պահուին : 4. Կը մաղթ յաղթանակը՝ բոլոր ցեղերուն համար հաւատարմեան, արդարութեան եւ ազատութեան Բազմակալութեան մը, եւ միութիւնը բոլոր անկեղծ ազատակամներուն :

Սեւանիկի «Միութիւն» եւ Յառաջդիմութիւն» Քամիքէն պատախառնեց հետեւեալ հեռագրով .

«Սաջամբ մը մարգարեական հետագիրը՝ չորս յոյժաւով. զգածուած եմ մեր ցաւակցութիւններէն. ընտրակալութիւն մը մարգարեաներուն համար. բնութեան ելը կ'իմանա. այժմ հանգարտութիւն Աստուայի մէջ. կ'ապահովենք որ ամեն բան պիտի ընենք անկարգութեանց վաւարամը ջնջելու համար. չորսոյ յոյժաւով մէջ յայտնուած իղծը մերն ալ է :

Այս հեռագրին «քննութեան ելը կ'իմանա» խօսքը քեզ մը երկդիմի է. կը թուի որ Սեւանիկի Քամիքէն ալ կարծած է թէ Հայերն ալ պատասխանատուութեան բաժինն մը ունին Ատանայի շարդեւուն մէջ. «Ատանայի մէջ հանդարտութիւն» կը հռչակէ այդ հեռագիրը, եւ միևնոյն պահուն Ատանայի երկրորդ շարդը կը սկսէր :

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Փարիզի Հայերը՝ նախաձեռնութեամբ Տիգրան խան Քեւէկեանի՝ կազմեցին հանգանակիչ մասնախումբ մը, որ արդէն հաւաքած է Հայոց մէջ 30,000 Ֆրանք. մէկ քանի Ֆրանսացիներ